Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

2020թ. մայիսի 14-ի նիստի թիվ 45/5 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ՝ ——————————Ա. Հ. Մակարյան

«14» մայիսի 2020թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթակարգով կարգավորվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) բակալավրական կրթական ծրագրերով ուսումնառություն ստացած 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ առցանց ատեստավորման ժամանակավոր կանոնները:

2. Ընթացակարգը մշակվել է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությունների, «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի (7.11.2017, թիվ 1282-Ն, ՀՀ ԿԳ նախարար), «ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման» կարգի (14.02.2018, ԵՊՀ ԳԽ), ավարտական աշխատանքներն առցանց կազմակերպելու վերաբերյալ ԵՊՀ պրոռեկտորի 15.04.2020թ. թիվ Շ/55-20 շրջաբերականի հիման վրա:

3. Սույն ընթացակարգով սահմանվում են 2019-2020թ. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կազմակերպման առանձնահատկությունները, հիմք

ընդունելով՝ ՀՀ Կառավարության 16.03.2020թ. «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումը, ՀՀ Պարետի 31.03.2020թ. թիվ 27 որոշման 2-րդ հավելվածի Աղյուսակ 1-ի «Կրթություն» բաժնի կարգավորումները և արտակարգ դրության հետ կապված այլ իրավական ակտեր:

II. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

4. Պաշտպանության նշանակված ժամկետից առնվազն 5 օր առաջ ամբիոն պետք է ներկայացված լինեն ուսանողի ավարտական աշխատանքի էլեկտրոնային փաթեթը՝ աշխատանքը, ղեկավարի և գրախոսի կարծիքները (բոլորը pdf ձևաչափով), ինչպես նաև հրապարակային պաշտպանության ուսանողի ելույթի ppt պրեզենտացիան:

5. Ամբիոնի գործավարը, պաշտպանության նշանակված ժամկետից առնվազն 5 օր առաջ, հանձնաժողովի անդամներին ուղարկում է բոլոր ուսանողների աշխատանքների էլեկտրոնային փաթեթները՝ ներառյալ ավարտական աշխատանքների գնահատման ձևաչափի էլեկտրոնային տարբերակը:

6. Մինչև պաշտպանության օրը՝ հանձնաժողովի անդամները ծանոթանում են ուսանողների ավարտական աշխատանքներին և իրականացնում հետևյալ երեք չափանիշների նախնական գնահատում ըստ չափորոշիչների.

6.1.աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը (առավելագույնը՝ 2 միավոր),

6.2.աշխատանքի կատարումը և արդյունքները (առավելագույնը՝ 6 միավոր),

6.3.աշխատանքի շարադրումը և ձևավորումը (առավելագույնը՝ 4 միավոր):

7. Ուսանողն ամփոփիչ առցանց ատեստավորմանը նախապատրաստվելով պարտավոր է ունենալ՝

7.1. ZOOM ծրագրով ներբեռնված համակարգիչ՝ տեսախցիկով,

7.2. ականջակալներ և միկրոֆոն,

7.3.անխափան և որակյալ ինտերնետային կապ,

7.4.ZOOM ծրագրով ներբեռնված և առնվազն 3G հեռախոսային ինտերնետային կապով օժտված հեռախոս սմարթֆոն, որը կծառայի որպես պահուստային սարք,

7.5.համակարգչին և հեռախոսին ներբեռնված իր ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանության ելույթի ppt պրեզենտացիան:

III. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

8. Ավարտական աշխատանքների պաշտպանությունը կազմակերպվում է առցանց՝ ZOOM տեսակոնֆերանսի միջոցով:
9. Պաշտպանության ընթացքը ղեկավարում է պաշտպանության կազմակերպիչը, և այն ամբողջովին տեսաձայնագրվում է:
10. Ակադեմիական խմբերի համար ամբիոնները պատրաստում են պաշտպանությունների հստակ ժամանակացույց՝ ամեն ուսանողի համար նախատեսելով առավելագույնը 10-15 րոպե ելույթի և 5 րոպե հարցերի համար:
11. Ամբիոններն ուսանողներին տեղեկացնում են նրանց համար նախատեսված անհատական ժամանակահատվածի մասին, տրամադրում են հանձնաժողովի ZOOM կոնֆերանսին միանալու ինտերնետային հղումը և պաշտպանության կազմակերպչի հեռախոսահամարը:
12. Իրենց համար նախատեսված ժամից 3-5 րոպե առաջ ուսանողներն ուղարկում են կոնֆերանսին միանալու հայտ և սպասում են ZOOM սպասման գոտում (Waiting room): Հերթը հասնելու դեպքում պաշտպանության կազմակերպիչը ընդունում է տվյալ ուսանողի հայտը (Admit) և միացնում ծրագրին. այդ պահից սկսվում է ուսանողի ավարտական աշխատանքի պաշտպանության գործընթացը:
13. Հերթը հասնելու պահին, եթե ուսանողը չի կարողանում ներկա գտնվել ZOOM ծրագրի սպասման գոտում, նա պարտավոր է պատճառի մասին տեղեկացնել պաշտպանության կազմակերպչին: Վերջինս տեղեկացնում է հանձնաժողովին և անդամների համաձայնությամբ նշանակում պաշտպանության նոր ժամանակ, բայց ոչ ավել, քան մինչև տվյալ խմբի պաշտպանության ավարտը, որից հետո

հանձնաժողովը իրավասու է համարել, որ այդ ուսանողը չի ներկայացել պաշտպանությանը։

14. Քննական օրվա տևողությունը չպետք է գերազանցի 8 ժամը։
15. Ուսանողը ամփոփիչ առցանց ատեստավորմանը մասնակցելու համար պարտավոր է՝
    15.1. պաշտպանությանը միանալ իր անուն ազգանունով,
    15.2. սենյակում լինել միայնակ,
    15.3. պաշտպանության ընթացքում համակարգչով նստել պատի դիմաց՝ մշտապես միացրած պահելով տեսասարքը,
    15.4. ինքնուրույն ցուցադրել պրեզենտացիան՝ սեփական համակարգչի էկրանը հասանելի դարձնելով (Screen share) հանձնաժողովի անդամների համար,
    15.5. պաշտպանության ընթացքում պահպանել ակադեմիական ազնվությունը:
16. Սույն ընթացակարգի 15-րդ կետով սահմանված պայմաններից առնվազն մեկի խախտման դեպքում ուսանողի պաշտպանությունը դադարեցվում է, ուսանողը համարվում է չատեստավորված, անկախ նախօրոք տրված պատասխանի բովանդակությունից և ծավալից։
17. Պաշտպանությանը մասնակցում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամները, գիտական ղեկավարը, գրախոսը և 3-5 ունկնդիրներ:
18. Հանձնաժողովի անդամների տեսախցիկները պարտադիր պետք է միացված լինեն ողջ պաշտպանության ընթացքում:
19. Ավարտական աշխատանքը գնահատում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի այն անդամները, որոնք ներկա են եղել տվյալ ուսանողի պաշտպանության ողջ ընթացքին:
20. Հանձնաժողովի ամեն մի անդամ ավարտական աշխատանքի գնահատումն իրականացնում է 20 բալանոց սանդղակով՝ «ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման» կարգի 3-րդ աղյուսակով նախատեսված ավարտական աշխատանքի գնահատման չափանիշների, չափորոշիչների և հատկացվող միավորներին համապատասխան:

21. Ուսանողի արդյունարար միավորը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների նշանակած արդյունարար միավորների միջինն է։
22. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի փակ նիստում:
23. Գնահատականները հայտարարվում են նույն օրը՝ տվյալ խմբի պաշտպանության վերջում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո, հանձնաժողովի նախագահի կողմից՝ ողջ խմբի ներկայությամբ:
24. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բոլոր որոշումները քարտուղարն արձանագրում է:
25. Արձանագրության մեջ նշվում են ավարտական աշխատանքների գնահատականները, տրված հարցերը, հատուկ կարծիքները, շնորհված որակավորումը, աստիճանը, Մասնաճյուղն ավարտողի դիպլոմի տեսակը և արձանագրության օրինակելի ձևում նախատեսված այլ տեղեկատվություն:

IV. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

26. Գնահատման արդյունքների հրապարակումից հետո՝ հանձնաժողովի նախագահը ներկա ուսանողներին պարտավոր է հարցնել բողոքների առկայության մասին։
27. Ուսանողը գնահատման արդյունքների հրապարակումից անմիջապես հետո՝ դրանց վերաբերյալ բողոքի առկայության դեպքում դիմում է հանձնաժողովի նախագահին։
28. Բողոքարկումն իրականացվում է, եթե առկա են «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի և սույն ընթացակարգային դրույթների խախտումներ։
29. Հանձնաժողովի նախագահը շրջանավարտին է ներկայացնում հանձնաժողովի անդամների գնահատումների արդյունքները՝ համաձայն «ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման» կարգի 3-րդ աղյուսակով նախատեսված ավարտական աշխատանքի գնահատման չափանիշների և չափորոշիչների:

30. Գնահատման գործընթացում ընթացակարգերի կիրարկման, գնահատման, միավորների հաշվարկման ու ամփոփման սխալների հայտնաբերման դեպքում՝ հանձնաժողովը.

30.1. անհրաժեշտությունից ելնելով՝ դիտում է տեսաձայնագրության այն մասը, որն առնչվում է բողոքարկվող դեպքին,

30.2. փոխում է ուսանողի գնահատականը, եթե հայտնաբերված խախտումը կամ սխալն ազդել են գնահատման արդյունքի վրա,

30.3.չի փոխում գնահատականը, եթե սխալը կամ թերությունը չեն ազդել գնահատման արդյունքի վրա,

30.4.չեղարկում է պաշտպանության արդյունքները, եթե առկա են ընթացակարգային լուրջ խախտումներ և անմիջապես կազմակերպում է նոր պաշտպանություն։